

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

16.01.2013թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Անանյանը, Գ. Գևորգյանը, Վ. Դավթյանը, Լ. Պետրոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ա.Դաշյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ներքին աուդիտի վարչության պետ Ա. Մանանդյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ՁԵՎ ԹԻՎ 1-ԱՆՏԱՌ (եռամսյակային) և ՁԵՎ ԹԻՎ 2-ԱՆՏԱՌ (եռամսյակային) վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևերին հավանություն տալու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Ա.Ավագյան/

Որոշվեց՝

Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ՁԵՎ ԹԻՎ 1-ԱՆՏԱՌ (եռամսյակային) և ՁԵՎ ԹԻՎ 2-ԱՆՏԱՌ (եռամսյակային) վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևերին»:

/Անհատական/

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հուլիսի 26-ի թիվ 110-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Ա.Հայրապետյան/

Որոշվեց՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հուլիսի 26-ի թիվ 110-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունները:

/Նորմատիվ/

20.02.2013թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Անանյանը, Գ. Գևորգյանը, Վ. Դավթյանը, Յու.Պողոսյանը, Լ. Պետրոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի առաջատար մասնագետ Ռ. Շաբոյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Աջակցություն ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը Թվինինգի միջոցով» ԵՄ կողմից ֆինանսավորված երկամյա ծրագրի հաջող ավարտի կապակցությամբ ԵՄ կողմից ներգրավված խորհրդատուներին և փորձագետներին ՀՀ ՎՊԽ և ՀՀ ԱՎԾ պատվոգրերով պարգևատրելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ռ. Շաբոյան/

Որոշվեց՝

«Աջակցություն ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը Թվինինգի միջոցով» ԵՄ կողմից ֆինանսավորված երկամյա ծրագրի հաջող ավարտի կապակցությամբ ՀՀ ԱՎԾ պատվոգրերով պարգևատրել՝

1. Պարոն Յան Պլովզինգին, Դանիայի վիճակագրության գլխավոր տնօրեն
2. Պարոն Լարս Տիգենսենին, Դանիայի վիճակագրության տնօրեն,
նախագծի ղեկավար

3. Պարոն Թոմաս Բիին, Թվինինգ ծրագրի մշտական խորհրդատու
4. Թվինինգ ծրագրում ներգրավված այլ փորձագետներին
/Անհատական/

2. Հաղորդում արտասահմանյան գործուղուման հաշվետվության մասին.

Հաղորդում՝ Իտալիայի Ֆլորենցիա քաղաքում 2013 թվականի հունվարի 21-ից 24-ը Միգրացիոն քաղաքականության կենտրոնի (MPC), Միգրացիոն քաղաքականության զարգացման միջազգային կենտրոնի (ICMPD), Կառավարման գլոբալ ծրագրի (GGP) և Ֆլորենցիայի Եվրոպական համալսարանական ինստիտուտի համատեղ համագործակցությամբ կազմակերպված «Միգրացիան Եվրամիության և իր հարևան երկրներում» թեմայով մասնագետների վերապատրաստման դասընթացին և «Տվյալների հավաքագրում և վերլուծություն» խորագրով աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Կ. Կույումջյան/

Որոշվեց՝

Արտասահմանյան գործուղուման հաշվետվության մասին հաղորդումն ընդունելի գիտություն:

/Անհատական/

07.03.2013թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Անանյանը, Գ. Գևորգյանը, Յու. Պողոսյանը, Լ. Պետրոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման և մարկետինգի բաժնի պետ Ն. Մուշեղյանը:

Նիստում լսվեց հետևյալ հարցը.

1. «2012 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Մուշեղյան/

Որոշվեց՝

Հաստատել 2012 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը՝ համաձայն հավելված 1-ի:

/Անհատական/